

Funded
by the European Union
and the Council of Europe



Implemented
by the Council of Europe

Տարածաշրջանային ծրագրերի միջանկյալ արդյունքները՝ իրականացված Եվրոպայի խորհրդի/Եվրամիության Ծրագրային համագործակցության կառուցակարգի շրջանակներում (2015-2017թթ.)

Ի՞նչ է իրենից ներկայացնում Ծրագրային համագործակցության կառուցակարգը

2014թ. ապրիլին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնվել են իրականացնել թիրախային համագործակցության միջոցառումներ ԵՄ Արևելյան գործընկերության երկրներին մոտեցնելու մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության եվրոպական ստանդարտներին: Ծրագրերն իրականացվում են 2015-2017թթ. Ծրագրային համագործակցության կառուցակարգի (ՕՀԿ) շրջանակներում: Ծրագրերը հիմնականում ֆինանսավորվում են ԵՄ կողմից, և Եվրոպայի խորհուրդը համաֆինանսավորում և իրականացնում է դրանք:

Քաղաքացիների մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում

Սույն տարածաշրջանային ծրագրի նպատակն է Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության ամրապնդումը, պետական իշխանության մարմինների հետ արդյունավետ փոխգործակցության խթանումը և որոշումների կայացման ժողովրդավարական գործընթացում քաղաքացիական մասնակցության խրախուսումը: Ի տարբերություն միջազգային ֆինանսավորում ունեցող բազմաթիվ այլ նախաձեռնությունների՝ Եվրոպայի խորհրդի ծրագրի նպատակն է համախմբել քաղաքացիական հասարակության առաջնորդների և պետական ծառայողների գիտելիքն ու փորձը, ինչպես նաև եռանդը տարածաշրջանային մակարդակով գործունեություն ծավալելու համար: Ծրագիրը խթան է հանդիսացել ՀԿ-ների, պետական իշխանության մարմինների ներկայացուցիչների և անկախ փորձագետների շրջանում բանավեճի, ուսուցման և ցանցային համագործակցության համար:

Փորձագետների աջակցությամբ և տարբեր հարցերով աշխատանքային խմբերի և տարածաշրջանային համաժողովների միջոցով հրատարակվել է [«Արևելյան գործընկերության երկրների քաղաքացիների մասնակցությունը որոշում կայացնելու գործընթացում»](#) աշխատությունը: Դրա հիման վրա, ծրագրի իրականացման ընթացքում ստեղծված բազմաթիվ շահագրգիռ կողմերի մի փոքր շրջանակ նախապատրաստելու է տարածաշրջանային ռազմավարություն՝ որոշում կայացնելու գործում քաղաքացիների մասնակցությունը խթանելու նպատակով: Այս ռազմավարությունը և բազմակողմանի փորձի

փոխանակումը, ինչպես նաև նորաստեղծ ոչ պաշտոնական ցանցը կօգնեն մասնակից երկրներին դիմագրավել ժողովրդավարության առջև ծառայած մարտահրավերներին, որոնք հաճախ առաջանում են երկրաքաղաքական, սոցիալական և տեխնոլոգիական սրընթաց փոփոխությունների հետևանքով:

► [Հղում սույն ծրագրի տեղեկագրին](#)

Արևելյան գործընկերության երկրներում դատական բարեփոխումների շուրջ տարածաշրջանային երկխոսությունը

Տարածաշրջանային երկխոսության միջոցով Եվրոպայի խորհուրդը դյուրացրեց **Արևելյան գործընկերության վեց երկրների** միջև փորձի փոխանակումները, որպեսզի նրանք համեմատեն իրենց մոտեցումները և սովորեն միմյանցից՝ հետագայում իրենց արդարադատության համակարգերը բարեփոխելու նպատակով: Տարածաշրջանում դատական իշխանության առջև ծառայած մարտահրավերները ուսումնասիրելու, լավագույն գործելակերպերը հայտնաբերելու և ներպետական բարեփոխումների գործընթացները ամրապնդելու վերաբերյալ առաջարկները ձևակերպելու համար ստեղծվեց տարածաշրջանային համակարգող խումբ: Բարեփոխումների համար ընտրվեցին հատուկ ոլորտներ և ստեղծվեցին աշխատանքային խմբեր:

Նրանք վերլուծեցին մարտահրավերները և մշակեցին հնարավոր մոտեցումներ դատական էթիկայի, էլեկտրոնային արդարադատության, իրավաբանական աջակցության, կողմերի հավասարության, դատական գործելակերպերը ներդաշնակեցնելու և դատավորներ ընտրելու և կարիերայի հարցերում գերագույն դատարանների դերի վերաբերյալ փորձագետների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և արդարադատության նախարարությունների, դատական ինքնակառավարման մարմինների և փաստաբանների միությունների մասնակցությամբ: Ծրագրի շահառուները նաև սկսեցին ուսումնասիրել դատավորների անկախության, դատական բարեփոխումների թափանցիկ և համապարփակ գործընթացներ ապահովելու ուղիների և վեճերի այլընտրանքային լուծման մոտեցումների հետ կապված խնդիրները:

► [Հղում սույն ծրագրի տեղեկագրին](#)

Սահմանադրական արդարադատության ամրապնդումը

Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովն օժանդակեց **Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում** տեղի ունեցող սահմանադրական գործընթացներին և ամրապնդեց ԱլԳ երկրների բոլոր վեց սահմանադրական դատարանների միջև հավասարակիցների ցանցային համագործակցությունը: Նրանց ներկայացուցիչներն ուսումնասիրեցին սահմանադրական դատարանների դերը ժողովրդավարական համակարգերում՝ ուշադրությունը սևեռելով դատարան ներկայացվող և անհատական գանգատների ընթացակարգերի անկախության վրա: ԱլԳ երկրների սահմանադրական դատարանները ընդլայնել են գոյություն ունեցող այնպիսի գործիքների օգտագործումը իրենց կողմից, ինչպիսիք են օրինակ՝ սահմանադրական նախադեպային իրավունքի տվյալների

բազան (CODICES) և «Վենետիկի համաժողովը», որոնք հնարավորություն են ստեղծում դատարանների միջև տեղեկատվության փոխանակման համար՝ նրանց օգնելով առավել արդարացի որոշումներ կայացնել:

► [Հղում սույն ծրագրի տեղեկագրին](#)

ԱլԳ հինգ երկրներում կանանց համար արդարադատության հասանելիության բարելավումը

Սույն տարածաշրջանային ծրագրի շրջանակներում մշակվել են **Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում** կանանց համար արդարադատության հավասար հասանելիության խոչընդոտները հայտնաբերելուն և վերացնելուն ուղղված աշխատություններ և գործնական մեխանիզմներ: Ծրագրի վերջնարդյունքները միտված են տարածաշրջանային մակարդակով և տարածաշրջանի սահմաններից դուրս մտահոգությունները և ընդհանուր խնդիրներն արտացոլող կարիքներին արձագանքելուն: Տարածաշրջանային հարթությունն օգտվում է ընդհանուր հիմնախնդիրների և առկա հաջող գործելակերպի համար «հավասարը հավասարին» մոտեցումից, ինչպես նաև խրախուսում է այն:

Ծրագրի շրջանակներում կնքվեցին համաձայնագրեր **Հայաստանի** Արդարադատության ակադեմիայի, **Ադրբեջանի** Արդարադատության ակադեմիայի, **Վրաստանի** Արդարադատության բարձրագույն դպրոցի, **Վրաստանի** գլխավոր դատախազության, **Մոլդովայի** Հանրապետության Արդարադատության ազգային ինստիտուտի և **Ուկրաինայի** Դատավորների ազգային դպրոցի հետ՝ նպատակ ունենալով այս հաստատությունների ուսումնական ծրագրերում ներառել կանանց համար արդարադատության հասանելիությունը: Ծրագրի մասնակից յուրաքանչյուր երկրում նաև կազմակերպվում են ազգային մակարդակով ուսուցողական սեմինարներ դատավորների և դատախազների համար: Վերջնական արդյունքը կլինի «Կանանց համար արդարադատության հասանելիությունը ապահովելու մասին» ուսումնական ձեռնարկը, որը կազմված է ընդհանուր մասից և առանձին՝ «ազգային գլուխներից»՝ ԱլԳ յուրաքանչյուր հինգ երկրից համապատասխան տեղեկատվությամբ և օրինակներով:

► [Հղում սույն ծրագրի տեղեկագրին](#)

Մարդու իրավունքների կրթության և ժողովրդավարական քաղաքացիության խթանումը

Պետական իշխանության մարմինների ներկայացուցիչներից և ազգային փորձագետներից կազմված Վերստուգող հանձնաժողովի ստեղծումը, ինչպես նաև տարածաշրջանային միջոցառումների կազմակերպումը, հնարավորություն տվեցին կատարել տարածաշրջանային մակարդակով սոցիալական զարգացումների և քաղաքական մարտահրավերների վերաբերյալ կարծիքների բաց փոխանակում և առանձին երկրների

հատուկ կարիքների և առաջնահերթությունների վերաբերյալ պարզաբանումներ: Դրա հիման վրա իրականացվեցին ազգային քաղաքականության շրջանակներում խորքային վերլուծություններ ապահովող ինքնագնահատման ուսումնասիրություններ և դրանք ներկայացվեցին համապատասխան ազգային հաստատություններին:

Ի լրումն այս ուսումնասիրության գործընթացին՝ երկրի մակարդակով տրամադրվել է տեխնիկական օժանդակություն, որը կօգնի գործընկերներին հզորացնել իրենց դպրոցներում ժողովրդավարական կառավարումը, ավելացնել ժողովրդավարական քաղաքացիության կրթության և մարդու իրավունքների կրթության մասով ուսուցիչների բանիմացությունը, ինչպես նաև մշակել իրենց դպրոցների ուսումնական ծրագրերը և կրթական նյութերը: Ավելին, Ժողովրդավարական քաղաքացիության կրթության և մարդու իրավունքների կրթության հիմնական ձեռնարկները թարգմանվել են շահառու երկրների մի շարք լեզուներով, այդ թվում՝ Ժողովրդավարական քաղաքացիության կրթության և մարդու իրավունքների կրթության մասին խարտիան առաջին անգամ թարգմանվել է բելառուսերեն:

► [Հղում սույն ծրագրի տեղեկագրին](#)

Քրեակատարողական բարեփոխումների խթանումը (պատժիչ մոտեցումից դեպի վերականգնողական մոտեցում)

Բանտերի գերբեռնվածությունը շատ պետությունների համար լուրջ խնդիր է: Ուստի, Եվրոպայի Խորհուրդը նախաձեռնել է բանտերի գերբեռնվածության դեմ արդյունավետ պայքարի **տարածաշրջանային** անդրադարձման մեխանիզմ: Անդրադարձման այս մեխանիզմի արդյունքում **Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի** համատեղ ջանքերով կազմվեց մեկ ընդհանուր գեկույց և կոնկրետ երկրներին վերաբերող չորս գեկույցներ, որոնք պարունակում էին առաջարկություններ բանտերի գերբեռնվածության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ: Առաջարկություններն ամփոփվել են Արևելյան Գործընկերության երկրներում բանտերի գերբեռնվածությանը քրեական արդարադատության հակազդման մասին գեկույցում, իսկ դրանց իրականացման եղանակները քննարկվել են ամփոփիչ համաժողովում, ինչպես նաև հրավիրվել է աշխատաժողով՝ նվիրված հետագա քայլերին և տեխնիկական հետագա օժանդակության համար յուրաքանչյուր մասնակից երկրի անհատական կարիքներին:

► [Հղում սույն ծրագրի տեղեկագրին](#)

Թմրանյութերից կախվածություն ունեցող բանտարկյալների նկատմամբ քրեական արդարադատության հակազդումը

Եվրոպայի խորհրդի Պոմպիդու խումբը սերտորեն աշխատել է **Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի** հետ թմրամիջոցների մասին օրենսդրությունը և բանտում թմրամոլության բուժման ծառայությունները բարելավելու նպատակով: **Վրաստանի**

իշխանությունների հետ համատեղ Եվրոպայի խորհուրդը մշակել է գործողությունների ազգային ծրագիր քաղաքականության և օրենսդրության փոփոխությունների համար՝ բանտերի գերբեռնվածությունը և թմրամիջոցներից կախվածություն ունեցող իրավախախտների թիվը կրճատելու նպատակով: **Մոլդովայում** տարածաշրջանային ծրագիրը *Պրունկուլ* բանտում վերազինել է մեկ հիվանդասենյակ թմրանյութերից կախվածություն ունեցող բանտարկյալների համար թերապևտիկ միություն ստեղծելու նպատակով և վերապատրաստել է տեղի անձնակազմը այն վարելու համար: **Հայաստանի** 25 բժիշկներ և հոգեբաններ և **Ուկրաինայի** Պրիլուկիի և Մելիտոպոլի անչափահասների գաղութի անձնակազմը բարելավել են իրենց թերապևտիկ հմտություններն ու այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են օրինակ՝ ընտանեկան թերապիան և ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը:

► [Հղում սույն ծրագրի տեղեկագրին](#)

Կոռուպցիայի դեմ պայքարը և լավ կառավարման խթանումը, փողերի լվացման դեմ պայքարը

Եվրոպայի խորհուրդը օժանդակել է **Արևելյան գործընկերության երկրներին** իրենց օրենսդրական նախագծման մեթոդները բարելավելու գործում՝ բոլոր վեց երկրների համար մշակելով օրենսդրության մոդել այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են շահերի բախումը, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը և բարեվարքության ստուգումը: Օրենսդրության մոդելը մշակվել է՝ հիմնվելով թեմատիկ միջազգային չափանիշների և համեմատական հաջող գործելակերպի վրա, յուրաքանչյուր դրույթի վերաբերյալ տրվել են մեկնաբանություններ, ինչպես նաև ներկայացվել են օտար երկրների մոդելները:

Տարածաշրջանում օրենսդրական գործընթացները հետագայում խթանվել են օրենսդրության նախագծի վերաբերյալ փորձնական միջոցառումների միջոցով փորձագիտական կարծիքների ներկայացմամբ: Օրինակ՝ այս նախաձեռնության միջոցով Եվրոպայի խորհուրդը **Մոլդովային** խորհուրդներ է տվել քրեական օրենսգրքի ապօրինի հարստացման դրույթների, բարեվարքությունը ստուգելու մասին օրենքի փոփոխությունների, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքի նախագծի վերաբերյալ: Փորձնական միջոցառումների միջոցով Եվրոպայի խորհուրդը աշխատել է **Ադրբեջանի** հետ՝ այդ երկրում ներմուծելով «ռիսկերի կառավարում» հասկացությունը, և կաշակցի **Բելառուսին** կրթական հաստիքներով կոռուպցիոն ռիսկերը որոշելու գործում:

Կիրերհանցագործությունը ԱլԳ-ում II. տարածաշրջանային և միջազգային համագործակցություն

Կիրերհանցագործությունը ԱլԳ-ում III. Պետություն/մասնավոր հատված համագործակցություն

Եվրոպայի խորհուրդն աջակցել է **Արևելյան գործընկերության երկրներին (ԱլԳ)** միջազգային և տարածաշրջանային համագործակցության նպատակով փոխադարձ իրավական աջակցություն տրամադրող մարմինների և շուրջօրյա կապի կենտրոնների հնարավորությունները հզորացնելու, ինչպես նաև պետություն/մասնավոր հատված համագործակցությունը ընդլայնելու նպատակով՝ Կիրերհանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիային համահունչ: Նախագծի թիմը վերլուծել է փոխադարձ իրավական աջակցության կանոններն ու ընթացակարգերը **յուրաքանչյուր ԱլԳ երկրի** համար և տրամադրել է ներկայիս իրավիճակի, պետություն/մասնավոր հատված և իրավապահ գործունեություն ծավալողների / ծառայություններ մատուցողների շրջանում համագործակցությանը վերաբերող հնարավորությունների և ռիսկերի պատկերը: Մշակվել են տեղեկատվական ռեսուրսների առցանց գործիքներ և պահեստավորված համակարգչային տվյալների հասանելիության նպատակով միջազգային հարցումների համար նախատեսված բազմալեզու ստանդարտացված կադապարներ՝ ընդլայնելու կիրերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ տեղեկատվությամբ կիսվելու հնարավորությունը: Հավասարակիցների ցանցային համագործակցության և փորձագիտական ուսումնասիրությունների միջոցով **ԱլԳ բոլոր երկրները** հասկացել են իրենց ուժեղ և թույլ կողմերը, առավել հստակ սահմանել են իրենց դերերն ու պարտականությունները և ընդունել են առաջարկություններ կիրերհանցագործությունների ոլորտը բարելավելու համար:

- ▶ [Հղում ԱլԳ II-ում կիրերհանցագործության վերաբերյալ տեղեկագրին. տարածաշրջանային և միջազգային համագործակցություն](#)
- ▶ [Հղում ԱլԳ III-ում կիրերհանցագործության վերաբերյալ տեղեկագրին. Պետություն/մասնավոր հատված համագործակցություն](#)

Մարդու իրավունքների առցանց պաշտպանության նկատմամբ հարգանքի ամրապնդումը՝ իրազեկվածության բարձրացման, տարածաշրջանային համագործակցության և համացանցի կառավարման համաշխարհային քաղաքականության ձևավորմանը մասնակցելու միջոցով

Տարածաշրջանային փոխանակումների միջոցով տարածաշրջանային ծրագիրը **Արևելյան գործընկերության երկրների** շրջանում խթանել է համացանցի օգտագործման քաղաքականության և համացանցի կառավարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի չափանիշների փոխըմբռնումը: Տարածաշրջանային ծրագիրը համախմբել է գործադիր և օրենսդիր ճյուղերը, դատական մարմինների համակարգը, տեղային համացանցային ծառայություններ մատուցողներին և հասարակական գործիչներին՝ քննարկելու համացանցի կառավարման հանրային քաղաքականության և համացանցի օգտագործման հետևանքով

ծագող նոր մարտահրավերներին դիմակայելու խնդիրները: Շահառու երկրների փորձագետները ընդլայնել են իրենց գիտելիքները և իրազեկվածությունը համացանցին առնչվող մարդու իրավունքների հարցերի շուրջ: Ծրագիրը նպաստել է **Վրաստանում** համացանցի կառավարման մշտական համաժողովի ստեղծմանը:

Մշակել և հզորացնել տվյալների պաշտպանության ազգային համակարգերը

Եվրոպայի խորհուրդը օգնել է բարելավել տվյալների պաշտպանության օրենսդրությունը՝ **Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում**: Որպես օրենսդրական հսկողության մաս՝ երկրների իշխանությունները քննարկել են իրենց օրենսդրական նախագծերը բարելավելու ուղիները՝ հիմք ընդունելով Եվրոպայի խորհրդի ներկայացրած մեկնաբանությունները: **Վրաստանը և Մոլդովան** ավելի ուշ պատրաստել են օրենսդրական փոփոխությունների նախագծեր, որոնք այժմ գտնվում են խորհրդարանում՝ քննարկման փուլում: Շարունակվում է երկխոսությունը **Բելառուսի** հետ՝ որոշելու տվյալների պաշտպանության համար առկա երաշխիքները վերլուծելու հարցում Եվրոպայի խորհրդի օժանդակության շրջանակը:

Խթանել պրոֆեսիոնալ և պատասխանատու լրագրությունը՝ ինքնակարգավորվող մարմինների տարածաշրջանային ցանցին աջակցելու միջոցով

Եվրոպայի խորհուրդը մեծացրել է **Արևելյան գործընկերության** տարածաշրջանային ինքնակարգավորման ցանցի անդամների հնարավորությունները՝ լրագրողների ենթադրյալ ոչ էթիկական վարքագծի վերաբերյալ միջպետական գանգատները քննելիս համագործակցությունը ամրապնդելու համար: Որպես միջոցառումների արդյունք տարածաշրջանային ինքնակարգավորման ցանցը ընդունել է էթիկայի տարածաշրջանային հանձնաժողովի կանոնադրությունը՝ ստեղծելով գանգատների քննման տարածաշրջանային մեխանիզմ: Տարածաշրջանային փոխանակումները **Արևելյան գործընկերության** ինքնակարգավորվող մարմիններին թույլ են տվել նաև ավելի լավ դիմակայել մարտահրավերներին, այդ թվում՝ լավագույնս պայքարել թշնամական հոետորաբանության դեմ համեմատական փորձի միջոցով:

► [Հղում սույն ծրագրի տեղեկագրին](#)

Տեղական կառավարման ինստիտուցիոնալ կառուցակարգերի հզորացումը

Եվրոպայի խորհուրդը օժանդակել է **Արևելյան գործընկերության** երկրներին՝ նպատակ ունենալով տեղային մակարդակով խթանել առավել արդյունավետ, թափանցիկ և էթիկական կառավարում, բարելավել իրավական կառուցակարգերի համակարգվածությունը և ֆինանսների կառավարումը: Տարածաշրջանային մակարդակում ծրագիրը խթանել է հավասարակիցների փոխանակումը և ցանցային համագործակցությունը տեղական իշխանությունների և նրանց միավորումների շրջանում:

Տարածաշրջանային և երկկողմ միջոցառումները օգնել են **Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից**՝ որպես փոփոխության առաջնորդներ հանդես եկող ավելի քան 60 քաղաքապետերի բարձրացնելով նրանց իրազեկվածությունը և պատրաստակամությունը հանրային քաղաքականության մեջ բարոյական չափանիշների ներդրման հարցում, խթանելով լավ կառավարումը և թափանցիկությունն իրենց առօրյա գործունեության մեջ և ղեկավարելով փոփոխությունների գործընթացն իրենց համայնքներում: Միջքաղաքային համագործակցության փորձնական նախագծեր են մշակվել **Հայաստանում, Վրաստանում և Մոլդովայում**, և ֆինանսական համեմատական վերլուծության տեղի մոտեցումը ներկայումս փորձարկվում է **Հայաստանում և Վրաստանում: Բելառուսի** տեղային վարչակազմի 35 ներկայացուցիչներ վերապատրաստվել են առաջնորդության թեմաների, հաջող կառավարման և արդյունավետ ղեկավարության մասով: **Մոլդովայում** կենտրոնական իշխանությունների և Գազաուզիայի ինքնավար իշխանությունների միջև երկխոսության ձևավորումը խթանվել է հատկապես վերապատրաստումների և փորձագիտական վերլուծության միջոցով: Այս միջոցառումներին օժանդակում է գործնական համայնքը՝ ցանց, որը միավորում է ազգային միավորումները, փորձագետներին և գործող մասնագետներին:

► [Հղում սույն ծրագրի տեղեկագրին](#)

Լրացուցիչ տեղեկությունների համար՝ <http://eap-pcf-eu.coe.int>

Կոնտակտային անձ՝ [Տառյանա Բախա](#), խոսնակ/ մամուլի պատասխանատու, +33 685 11 64

93

Հոկտեմբեր, 2016թ.